Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
օգոստոսի 6-ի N 963 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՏԱԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Օդանավ շահագործողի վկայական տալու կարգը (այսուհետ՝ կարգ) մշակված է «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) (ԻԿԱՕ) N 6 հավելվածի և «Օդանավ շահագործողի սերտիֆիկացման, մշտական վերահսկողության և շահագործման գործընթացային տեսչության կանոնակարգ» DOC 8335 (ԴՕԿ 8335) փաստաթղթի, Եվրոպական թռիչքային անվտանգության կազմակերպության (EASA) AIR-OPS (ԷՅՐ ՕՓՍ) և PART-M (ՓԱՐԹ-Մ) փաստաթղթերի համապատասխան պահանջների հիման վրա:

2. Օդանավ շահագործողի վկայականը՝ համաձայն N 2 ձևի, տրվում է օդային տրանսպորտի թռիչքային անվտանգության նպատակով:

3. Օդանավ շահագործողի վկայական կրողը կարող է առևտրային նպատակներով շահագործել քաղաքացիական օդանավեր:

4. Օդանավ շահագործողի վկայական ստացած իրավաբանական անձը կամ մարմինը չի կարող օդանավ շահագործողի իր վկայականը որևէ կերպ փոխանցել մեկ այլ անձի: Օդանավ շահագործողի վկայականի բնօրինակը պահպանվում է կազմակերպությունում, իսկ օդանավի փաստաթղթերում՝ կազմակերպության կողմից հաստատված դրա պատճենը:

5. Օդանավ շահագործողի վկայական տալու համար ներկայացվող պահանջները և օդանավ շահագործողի նկատմամբ մշտական վերահսկողությունը նպատակ ունեն գնահատելու օդանավ շահագործողի կողմից թռիչքների անվտանգ իրականացման պատրաստվածությունը և հնարավորությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին:

6. Առևտրային նպատակով քաղաքացիական օդանավերի շահագործումն առանց օդանավ շահագործողի վկայական ունենալու չի թույլատրվում:

7. Առևտրային նպատակով քաղաքացիական օդանավը շահագործվում է օդանավ շահագործողի վկայականին կից տրվող շահագործման հատուկ դրույթներին համապատասխան՝ համաձայն N 3 ձևի, որը տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ գլխավոր վարչություն) աշխատակազմի թռիչքային պիտանիության վարչության կողմից:

8. Գլխավոր վարչությունը տրամադրում է օդանավ շահագործողի վկայականը կամ մերժում է դրա տրամադրումը:

II. ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՏԱԼՈՒ ԿԱՄ ԱՅՆ ՄԵՐԺԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

9. Օդանավ շահագործողի վկայական տալու գործընթացն իրականացվում է հետևյալ փուլերով՝

1) հայտը ներկայացնելու գործընթացին նախորդող փուլ. հայտը ներկայացնելու գործընթացին նախորդող փուլում օդանավ շահագործողի վկայական ստանալու համար համապատասխան հայտ ներկայացնող իրավաբանական անձը կամ մարմինը (այսուհետ՝ հայտատու) կարող է քննարկումներ անցկացնել գլխավոր վարչության հետ՝ թույլատրվող

թռիչքների տիպերի, հայտատուի կողմից տրամադրվող անհրաժեշտ տեղեկատվությունների, ներկայացվող փաստաթղթերի ցանկի, դրանց պատրաստման ու ներկայացման ասպեկտների և հայտի ուսումնասիրման գործընթացի սահմանված փուլերի մասին տեղեկատվություն ստանալու համար: Նշված քննարկումների անցկացման դեպքում կազմվում է արձանագրություն, որը պարունակում է ամփոփ տեղեկատվություն քննարկմանը մասնակցած մասնագետների, քննարկված հարցերի և տրամադրված խորհրդատվության մասին: Կազմված արձանագրությունը պատշաճ կերպով հանձնվում է նաև հայտատուին.

2) հայտի պաշտոնական ներկայացման փուլ. հայտի պաշտոնական ներկայացման փուլում հայտատուն սույն կարգի 10-րդ կետում սահմանված ժամկետներում գլխավոր վարչություն է ներկայացնում համապատասխան հայտ՝ համաձայն N 1 ձևի (այսուհետ՝ հայտ), կից ներկայացնելով պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ Եվրոպական թռիչքային անվտանգության կազմակերպության PART-M (ՓԱՐԹ-Մ)-ով նախատեսված ձևի հայտը՝ համաձայն N 4 ձևի.

3) հայտին կից ներկայացված փաստաթղթերի նախնական գնահատման փուլ. հայտին կից ներկայացված փաստաթղթերի նախնական գնահատման փուլում գլխավոր վարչության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներն ուսումնասիրում են ներկայացված՝ իրենց գործառույթներին վերաբերող փաստաթղթերը և կազմում համապատասխան եզրակացություններ.

4) տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների փուլ.

ա. հայտատուի մոտ տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների փուլում գլխավոր վարչության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվում են տեսչական ստուգումներ և ուսումնասիրություններ՝ հայտում նշված օդային

փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ պահանջների պահպանման և իրավիճակի գնահատման նպատակով,

բ. գլխավոր վարչությունն անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել օդանավերի շահագործմանն առնչվող փորձնական և գործնական դիտարկումներ.

5) սերտիֆիկացման փուլ. սերտիֆիկացման փուլում իրականացվում է օդանավ շահագործողի վկայական տալու կամ այն մերժելու գործընթացը՝ սույն կարգի V գլխում սահմանված դրույթների և ընթացակարգի համաձայն:

III. ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ՀԱՅՏԸ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Համաձայն Եվրոպական թռիչքային անվտանգության կազմակերպության (EASA) AIR-OPS (ԷՅՐ ՕՓՍ) փաստաթղթի՝ առաջին անգամ օդանավ շահագործողի վկայական ստանալու համար հայտատուն հայտը շահագործման գործունեության նախատեսված օրվանից առնվազն ինսուն օր առաջ, իսկ օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման մասին հայտը (N 1 ձև) օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետի ավարտից առնվազն վաթսուն օր առաջ ներկայացնում է գլխավոր վարչություն՝ հայտին կից ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) ընկերության պետական գրանցման համարը.

2) ֆինանսական միջոցների, բանկային դեպոզիտների առկայության կամ բանկային երաշխիքի մասին տեղեկանք՝ ընօրինակը (աշխատակազմ և գրասենյակ պահելու, անձնակազմի անհրաժեշտ ուսուցման հնարավորության հավաստման համար).

3) միջազգային և (կամ) ներքին օդային երթուղիներում թռիչքների իրականացման ուղեցույց, որը պետք է համապատասխանի Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմա-

կերպության DOC 9376 (ԴՕԿ-9376) փաստաթղթի պահանջներին (հայտատուն սույն փաստաթուղթը կարող է ներկայացնել հայտը ներկայացնելուց հետո երեսուն օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան շահագործման նախատեսված օրվանից վաթսուն օր առաջ).

4) օդանավի թռիչքային պիտանիության պահպանման կառավարման ձեռնարկ (CAME) (ԿԱՄԵ) (հայտատուն սույն փաստաթուղթը կարող է ներկայացնել հայտը ներկայացնելուց հետո երեսուն օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան շահագործման նախատեսված օրվանից վաթսուն օր առաջ).

5) օդանավ շահագործողի ավիացիոն անվտանգության ծրագիր.

6) օդանավի պետական գրանցման վկայականի պատճենը.

7) օդանավի թռիչքային պիտանիության վկայականի պատճենը.

8) օդանավի սեփականությունը հավաստող փաստաթղթի կամ վարձակալության, կամ ենթավարձակալության հանձնման մասին պայմանագրի, կամ օդանավի ձեռքբերման, վարձակալության կամ ենթավարձակալության հանձնման վերաբերյալ մտադրությունների հուշագրի պատճենը.

9) Եվրոպական թռիչքային անվտանգության կազմակերպության PART-M (ՓԱՐԹ-Մ)-ով նախատեսված հայտը.

10) օդանավի տեխնիկական շահագործման անհրաժեշտ փաստաթղթեր.

11) հայտատուի և օդանավի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպության միջև կնքված պայմանագրի պատճենը, եթե օդանավի տեխնիկական սպասարկումը չի իրականացվելու հայտատուի կողմից:

11. Օդանավ շահագործողի վկայական ստանալու համար կարող են գլխավոր վարչություն հայտ ներկայացնել «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ

հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրավաբանական անձինք և մարմինները, որոնք՝

1) այլ երկրների ավիացիոն իշխանությունների կողմից օդանավ շահագործողի վկայական ստացած կազմակերպություններ չեն.

2) առնվազն մեկ պիտանի օդանավի սեփականատեր կամ վարձակալ (ենթավարձակալ) են, կամ կնքել են օդանավի ձեռքբերման, վարձակալության կամ ենթավարձակալության հանձնման վերաբերյալ մտադրությունների հուշագիր:

12. Օդանավ շահագործողի վկայական տալու կամ այն մերժելու վերաբերյալ որոշումը, համաձայն Եվրոպական թռիչքային անվտանգության կազմակերպության (EASA) AIR-OPS (ԷՅՐ ՕՓՍ) փաստաթղթի, ընդունվում է հայտը և դրան կից փաստաթղթերը գլխավոր վարչությունում մուտքագրվելուց հետո ինչսուն օրվա ընթացքում, իսկ օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման կամ մերժման վերաբերյալ որոշումն ընդունվում է հայտը և դրան կից փաստաթղթերը գլխավոր վարչությունում մուտքագրվելուց հետո վաթսուն օրվա ընթացքում:

13. Հայտը և դրան կից փաստաթղթերը գլխավոր վարչությունում մուտքագրվելուց հետո գլխավոր վարչության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներն իրականացնում են հայտի և հայտին կից ներկայացված փաստաթղթերի փաստաթղթային և գործնական նախնական գնահատում: Գլխավոր վարչության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության և նախնական գնահատման արդյունքում կազմվում են եզրակացություններ: Հայտատուն փաստաթղթերի նախնական գնահատման արդյունքում հայտնաբերված թերությունների և (կամ) անճշտությունների մասին գրավոր տեղեկացվում է համապատասխան ստորաբաժանման կողմից դրանց հայտնաբերման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

14. Այն դեպքում, երբ հայտը և ներկայացված փաստաթղթերը լիարժեք չեն, հայտը համարվում է ընդունված՝ հայտատուի կողմից վերջին անհրաժեշտ փաստաթուղթը գլխավոր վարչությունում մուտքագրվելու պահից:

15. Հայտի և դրան կից փաստաթղթերի նախնական գնահատման փուլից հետո, գլխավոր վարչության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ստացված եզրակացությունների հիման վրա, գլխավոր վարչության կողմից 3 աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է նախնական գնահատման ամփոփ եզրակացություն հայտավորված փոխադրումների իրականացման հնարավորության վերաբերյալ:

16. Սույն կարգի 15-րդ կետում նշված նախնական գնահատման ամփոփ եզրակացության կազմումից հետո հայտատուն տեղեկացվում է իր մոտ առաջիկա տեսչական ստուգումներ և ուսումնասիրություններ անցկացնելու ժամկետների և ուսումնասիրության ենթակա հարցերի շրջանակների մասին:

IV. ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

17. Հայտատուի ներկայացրած փաստաթղթերի իսկությունը և համապատասխանությունը պարզելու, նրա կարողություններն ու հնարավորությունները գնահատելու համար հայտատուի մոտ իրականացվում են տեսչական ստուգումներ և ուսումնասիրություններ:

18. Մինչև տեսչական ստուգումներ և ուսումնասիրություններ անցկացնելը, անհրաժեշտության դեպքում, հայտատուին կարող է ներկայացվել համապատասխան հարցաթերթիկ՝ անհրաժեշտ հարցերի պարզաբանման և լրացուցիչ տեղեկատվության ստացման նպատակով:

19. Տեսչական ստուգման և ուսումնասիրության ընթացքում իրականացվում են՝

1) շահագործման տեսչական ստուգում և ուսումնասիրություն՝ համաձայն Եվրոպական թռիչքային անվտանգության կազմակերպության ARM-AIR OPS (ԱՐՄ-ԷՅՐ ՕՓՍ)-ի պահանջների.

2) օդանավի թռիչքային պիտանիության պահպանման կառավարման համակարգի տեսչական ստուգում և ուսումնասիրություն.

3) օդանավի տեսչական ստուգում.

4) հայտատուի հնարավորությունների՝ սույն կարգի 22-րդ կետի պահանջներին համապատասխանության գնահատում:

20. Շահագործման տեսչական ստուգման և ուսումնասիրության ընթացքում իրականացվում են՝

1) հայտատուի գործունեության կառավարման համակարգի տեսչական ստուգում և ուսումնասիրություն.

2) հայտատուի միջազգային և (կամ) ներքին օդային երթուղիներում թռիչքների իրականացման ուղեցույցի գործնական ուսումնասիրություն.

3) վերգետնյա և թռիչքային շահագործման ուսումնասիրություն՝ ներառյալ ստացիոնար և շարժական ավիացիոն սարքավորումները, տեխնիկական սպասարկման միջոցները.

4) հայտատուի ներքին շահագործման հսկողության մակարդակի ուսումնասիրություն.

5) թռիչքային անձնակազմի որակավորման, անձնակազմի պատրաստման ծրագրերի ուսումնասիրություն.

6) հայտագրված աերոդրոմների ուսումնասիրություն, ընդ որում՝

ա. եթե հայտագրված է աերոդրոմ, որը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, և դրա վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը լիարժեք են, ապա ուսումնասիրությունը կարող է իրականացվել փաստաթղթային եղանակով,

բ. եթե տեսչական ստուգումներ և ուսումնասիրություններ իրականացնող խումբն արդեն իսկ ծանոթ է տվյալ աերոդրոմի հնարավորություններին, ապա նման ուսումնասիրություն կարող է չիրականացվել:

21. Տեսչական ստուգման ընթացքում իրականացվում են՝

1) օդանավի տեսչական ստուգում.

2) օդանավի կառամատուցային ստուգում (օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման դեպքում):

22. Տնտեսական առումով հայտատուի հնարավորությունների գնահատման ժամանակ տեսչական ստուգում և ուսումնասիրություն իրականացնող խումբը պետք է համոզվի, որ հայտատուն համապատասխանում է Եվրոպական թռիչքային անվտանգության կազմակերպության (EASA) AIR-OPS (ԷՅՐ ՕՓՍ) փաստաթղթով սահմանված բոլոր չափանիշներին՝ ներառյալ աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ գրասենյակային տարածքը, ունի համակարգչային ու կապի միջոցներ և աշխատակազմ, որոնց միջոցով իրականացնելու է հայտավորած գործունեությունը:

23. Օդանավ շահագործողի վկայական տալու գործընթացի ժամանակ հայտատուի օդանավերի, գրասենյակների և այլ ավիացիոն ենթակառուցվածքների՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվելու դեպքում հայտատուն օդանավերը, գրասենյակային համապատասխան փաստաթղթերը ներկայացնում է գլխավոր վարչություն՝ ուսումնասիրությունն ապահովելու նպատակով, կամ, իր ցանկությամբ, դրանց նկատմամբ իրականացվող ուսումնասիրությունների գործընթացն ապահովում է դրանց գտնվելու վայրերում՝ իր միջոցների հաշվին:

V. ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՏԱԼՈՒ ԿԱՄ ԱՅՆ ՄԵՐԺԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

24. Գլխավոր վարչության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ստացված նախնական գնահատման վերաբերյալ եզրակացություններն ամփոփվում և ներկայացվում են գլխավոր վարչության պետին՝ ամփոփ եզրակացությամբ, որի հիման վրա նրա հրամանով տրվում է համապատասխան օդանավ շահագործողի վկայական (N 2 ձև) կամ հայտը մերժվում է: Գլխավոր վարչության պետի հրամանի նախագծին կցվում են գլխավոր վարչության կողմից կազմված ամփոփ եզրակացությունը և օդանավ շահագործողի վկայականը: Համաձայն Եվրոպական թռիչքային անվտանգության կազմակերպության (EASA) AIR-OPS (ԷՅՐ ՕՓՍ) փաստաթղթի՝ օդանավ շահագործողի վկայականում փոփոխությունները կատարվում են դրա ընդունման ընթացակարգի համաձայն: Հայտը մերժվում է, եթե ամփոփ եզրակացության մեջ նշվում է, որ սույն կարգի 19-րդ, 20-րդ, 21-րդ և 22-րդ կետերի համաձայն իրականացված տեսչական ստուգումների արդյունքում հայտատուն չի բավարարում օդանավ շահագործող կազմակերպությանը ներկայացվող պահանջները:

25. Աննպատակահարմարության պատճառաբանությամբ հայտի մերժումն արգելվում է:

26. Օդանավ շահագործողի վկայականը տրվում է մինչև 2 տարի գործողության ժամկետով:

27. Հայտատուին տրվում է օդանավ շահագործողի վկայականի բնօրինակը, իսկ պատճենը պահպանվում է գլխավոր վարչությունում:

28. Օդանավ շահագործողի վկայական կրողը պատասխանատու է օդանավ շահագործողի վկայականի պահպանման համար: Օդանավ շահագործողի վկայականի կորստի կամ վնասման դեպքում օդանավ շահագործողի վկայական կրողը դրա մասին անհապաղ տեղեկացնում է գլխավոր վարչությանը:

29. Գլխավոր վարչությունը օդանավ շահագործողի դիմումի հիման վրա, դիմումն ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է օդանավ շահագործողի վկայականի կրկնօրինակը՝ գլխավոր վարչության պետի հրամանով:

30. Օդանավ շահագործողի վկայական ստացած կազմակերպությանը, գլխավոր վարչության միջնորդության հիման վրա, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության կողմից հատկացվում է համապատասխան եռանիշ կոդ:

VI. ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ՎԿԱՅԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

31. Պահանջվող շահագործման չափանիշների պահպանումն ապահովելու, հանրության համար անվտանգ և հարմարավետ փոխադրման ծառայություններ մատուցելու նպատակով՝ օդանավ շահագործողի նկատմամբ իրականացվում է մշտական վերահսկողություն՝ տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով:

32. Գործող պայմաններին ու պահանջներին օդանավ շահագործողի հնարավորությունների ու կարողությունների համապատասխանությունը պարզելու նպատակով՝ օդանավ շահագործողն ապահովում է գլխավոր վարչության աշխատողների մուտքը՝ ինչպես իր կազմակերպություն և օդանավեր, այնպես էլ՝ ցանկացած այլ կազմակերպություն, որն իրեն մատուցում է ավիացիոն ծառայություններ:

33. Գլխավոր վարչության կողմից յուրաքանչյուր օդանավ շահագործողի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ժամանակ պետք է մշակվի առանձին վերահսկողության ծրագիր:

34. Մշտական վերահսկողության ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության թռիչքային ստանդարտների,

թռիչքային անվտանգության և ավիացիոն անվտանգության շահագործողական նորմերի ապահովման պահանջներին չհամապատասխանելու դեպքում գլխավոր վարչությունը կարող է կասեցնել կամ դադարեցնել օդանավ շահագործողի վկայականի գործողությունը:

35. Օդանավ շահագործողի վկայականի գործողությունը կասեցվում է, եթե իրականացված տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում կամ որևէ այլ կերպ պարզվի, որ՝

1) օդանավ շահագործողը չի պահպանում այն պայմաններն ու պահանջները, որոնց հիման վրա տրվել է օդանավ շահագործողի վկայականը.

2) օդանավ շահագործողը չի պահպանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները.

3) օդանավ շահագործողը գլխավոր վարչության աշխատողներին չի տրամադրում պահանջվող փաստաթղթեր, չի ապահովում նրանց հասանելիությունը պահանջվող տեղեկատվությանը, սարքավորումներին, օդանավերին և ցանկացած այլ վայր կամ առարկայի, որոնք գտնվում են կամ պետք է գտնվեն նրա հսկողության ներքո.

4) օդանավ շահագործողը, ելնելով սույն կարգի 28-րդ կետի պահանջներից, օդանավ շահագործողի վկայականի կորստի կամ վնասման դեպքում անհապաղ չի տեղեկացրել գլխավոր վարչությանը:

36. Օդանավ շահագործողի վկայականի գործողությունը կարող է կասեցվել մինչև 6 ամիս ժամանակահատվածով:

37. Օդանավ շահագործողն օդանավ շահագործողի վկայականի գործողության կասեցման մասին տեղեկացվում է գլխավոր վարչության պետի համապատասխան հրամանի արձակումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

38. Օդանավ շահագործողի վկայականի գործողությունը կարող է վերսկսվել գլխավոր վարչության պետի համապատասխան հրամանով, երբ օդանավ շահագործողն իսպառ վերացրել է կասեցման համար հիմք հանդիսացած պատճառները:

39. Օդանավ շահագործողի վկայականի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) օդանավ շահագործողի վկայականի գործողության կասեցման ժամկետը լրանալու պահին օդանավ շահագործողի կողմից չեն վերացվել կասեցման համար հիմք հանդիսացած թերությունները և (կամ) պատճառները.

2) օդանավ շահագործողն իր՝ օդանավ շահագործողի վկայականի գործողության կասեցման ժամանակաընթացքում իրականացրել է առևտրային թռիչքներ կամ չթույլատրված այլ թռիչքներ.

3) լրացել է օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետը.

4) լրացել է օդանավ շահագործողի թռիչքային պիտանիության պահպանման կառավարման ստորաբաժանման կամ կազմակերպության՝ տվյալ գործունեությամբ զբաղվելու իրավունք տվող վկայականի գործողության ժամկետը.

5) օդանավ շահագործողի վկայական ստանալու օրվանից օդանավ շահագործողը 30-օրյա ժամկետում չի ներկայացրել օդանավի ձեռքբերման, վարձակալության կամ ենթավարձակալության հանձնման վերաբերյալ մտադրությունների հուշագրի հիման վրա ձեռք բերված կամ վարձակալված, կամ ենթավարձակալված օդանավի մասին համապատասխան պայմանագիր:

40. Օդանավ շահագործողն օդանավ շահագործողի վկայականի գործողության դադարեցման մասին տեղեկացվում է գլխավոր վարչության պետի համապատասխան հրամանի արձակումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

41. Օդանավ շահագործողի վկայականի գործողության դադարեցման դեպքում օդանավ շահագործողը գլխավոր վարչություն է հանձնում օդանավ շահագործողի վկայականի բնօրինակը:

42. Օդանավ շահագործողի վկայականի գործողության դադարեցման դեպքում գլխավոր վարչությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է նաև Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը՝ հատկացված եռանիշ կոդը չեղյալ համարելու նպատակով:

43. Օդանավ շահագործողը գլխավոր վարչությանը տեղեկացնում է օդանավ շահագործողի վկայական ստանալու ժամանակ ներկայացված տեղեկատվության մեջ կատարված փոփոխությունների մասին:

44. Գլխավոր վարչության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օդանավ շահագործողի գործունեության կասեցման կամ դադարեցման համար հիմք հանդիսացող թերությունների և (կամ) խախտումների հայտնաբերման դեպքում դրա մասին անհապաղ տեղեկացվում է գլխավոր վարչության պետին:

45. Եթե օդանավ շահագործողի վկայականում կամ շահագործման հատուկ դրույթներում պետք է կատարվեն փոփոխություններ կամ լրացումներ, ապա համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը 2 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին հայտնում է գլխավոր վարչության պետին:

VII. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

46. Օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար հայտատուն հայտին կից ներկայացնում է սույն կարգի 10-րդ կետի 1-ին, 3-րդ, 5-րդ, 10-րդ և 11-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը, եթե դրանցում կատարվել են փոփոխություններ: Սույն

կարգի 10-րդ կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 10-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը կարող են ներկայացվել՝ ինչպես թղթային, այնպես էլ՝ էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ գլխավոր վարչությունում պահպանվող տվյալ փաստաթղթերը լրացնելու նպատակով հայտատուն պետք է գլխավոր վարչություն ներկայացնի նաև տվյալ փաստաթղթի էլեկտրոնային տարբերակում ներառված փոփոխությունների թղթային տարբերակը՝ իր գործադիր մարմնի կողմից հաստատված համապատասխան փոփոխությունների թերթով:

47. Օդանավ շահագործողների, օդանավ շահագործողի վկայական տալու ընթացակարգերի մասին հակիրճ տեղեկությունները գլխավոր վարչության կողմից պարբերաբար հրապարակվում են գլխավոր վարչության www.aviation.am պաշտոնական ինտերնետային կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև N 1

Հ Ա Յ Տ

ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՏԱԼՈՒ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

ԲԱԺԻՆ 1: Հայտը ներկայացնելը

1. Հայտը պետք է լրացվի, ստորագրվի, կնքվի և ներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն (այսուհետ՝ գլխավոր վարչություն) նախատեսված շահագործման գործունեության օրվանից (գործողության ժամկետի ավարտից) առնվազն ինսուն օր առաջ՝ հետևյալ հասցեով՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0042, «Զվարթնոց» միջազգային օդանավակայան, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության մասնաշենք, հեռ.՝ 010-28-20-66, ֆաքս՝ 010-28-53-45, էլեկտրոնային փոստ՝ gdca@aviation.am, ինտերնետային կայք՝ www.aviation.am:

2. Հայտատուի մասին տեղեկատվություն
1) իրավաբանական անձի կամ մարմնի անվանումը՝ 2) գտնվելու վայրը՝ 3) ՀՎՀՀ-ն՝ 4) կապի բոլոր միջոցների համարներն ու գտնվելու վայրերը՝ 5) հայտատուի ֆիրմային անվանումը (առկայության դեպքում)՝ 6) հայտատուի գործունեության իրականացման վայրը՝ 7) հայտատուի շահագործման գործունեության հիմնական վայրը՝ 8) հայտատուի փոստային հասցեն՝ 9) շահագործման ընթացքում օպերատիվ կապ հաստատելու նպատակով տեղեկություններ այն մասին, թե անհրաժեշտության դեպքում օդանավ շահագործողի օպերատիվ ղեկավարության հետ անհապաղ կապվելու նպատակով կապի մասին տեղեկություններն օդանավում գտնվող ինչ փաստաթղթում (փաստաթղթերում) և որ մասում (մասերում) են ներկայացված՝ 10) օդանավ շահագործողի վկայականի համարը՝ 11) Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) (ԻԿԱՕ) կողմից տրված եռանիշ կոդը՝ 12) օդային տրանսպորտի միջազգային կազմակերպության (IATA) (ԱՅԱՏԱ) երկնիշ կոդը (առկայության դեպքում)՝ 3. Սույն հայտի 2-րդ կետի 10-րդ, 11-րդ և 12-րդ ենթակետերում նշված տեղեկատվությունները լրացվում են միայն օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման դեպքում:

4. Հայտատուի (օդանավ շահագործողի վկայական կրողի) կապի բոլոր միջոցները
1) հեռախոսահամարը (աշխատանքային ժամերին)՝ 2) հեռախոսահամարը (ոչ աշխատանքային ժամերին)՝ 3) հեռախոսահամարը (բջջային)՝ 4) ֆաքսի համարը՝ 5) էլեկտրոնային փոստը՝ 6) ինտերնետային կայքը (առկայության դեպքում)՝ 5. Գլխավոր վարչությունն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու է օդանավ շահագործողի վկայական կրողի մասին հետևյալ տեղեկատվությունը՝ ***1) իրավաբանական և առևտրային (առկայության դեպքում) անվանումը՝*** ***2) ինտերնետային կայքի հասցեն (բացակայության դեպքում էլեկտրոնային փոստի հասցեն)՝*** ***3) օդանավ շահագործողի օդանավերի տիպերը՝*** *6. Եթե Դուք չունեք ինտերնետային կայքի հասցե, ապա խնդրում ենք նշել հրապարակման ենթակա էլեկտրոնային հասցեն՝* ***1) խնդրում եմ հրապարակել սույն հայտի 4-րդ կետի 5-րդ ենթակետում նշված էլեկտրոնային փոստի հասցեն՝*** ***2) խնդրում եմ հրապարակել հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեն՝*** *7. Եթե չեք ցանկանում, որ Ձեր ընկերության մասին տեղեկատվությունը հրապարակվի գլխավոր վարչության ինտերնետային կայքում, ապա խնդրում ենք նշում կատարել ստորև նշված դաշտում՝* ***Օդանավ շահագործողի մասին տեղեկատվությունը չի հրապարակվել ընկերության խնդրանքով՝***

ԲԱԺԻՆ 2: Հայտատուի կառավարման համակարգի նկարագրությունը

8. Օդանավ շահագործողը պետք է ունենա այնպիսի կառավարման համակարգ, որպեսզի կարողանա իրականացնել պատշաճ կառավարում և վերահսկողություն օդանավ շահագործողի վկայականով նախատեսված բոլոր տեսակի ավիացիոն գործունեությունների իրականացման ընթացքում: Սույն բաժնում նշված տեղեկատվությունը պետք է արտացոլի օդանավ շահագործող ընկերության համապատասխան ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց մասին հիմնական տեղեկատվությունը (խնդրում ենք հայտին կցել նաև նշված յուրաքանչյուր պաշտոնատար անձի ինքնակենսագրականը (CV): Սույն բաժնում նշված պաշտոնատար անձանց աշխատանքային հմտություններն ու փորձը պետք է համապատասխանեն Եվրոպական թռիչքային անվտանգության կազմակերպության ARM-AIR OPS (ԱՐՄ-ԷՅՐ ՕՓՍ)-ով սահմանված պահանջներին, և նրանց թեկնածությունները պետք է հաստատվեն գլխավոր վարչության կողմից:

9. Հաշվետու ղեկավար
Օդանավ շահագործողը պետք է ունենա նշանակված հաշվետու ղեկավար, ով պետք է օժտված լինի այնպիսի իրավունքներով, որոնք նրան հնարավորություն կտան ապահովելու բոլոր տեսակի շահագործումների և տեխնիկական սպասարկման գործառույթների պատշաճ մակարդակով իրականացումը՝ 1) անունը, ազգանունը՝ 2) բնակության վայրը՝
10. Հաշվետու ղեկավարի կապի միջոցները՝ 1) հեռախոսահամարը (աշխատանքային ժամերին)՝ 2) հեռախոսահամարը (ոչ աշխատանքային ժամերին)՝ 3) հեռախոսահամարը (բջջային)՝ 4) ֆաքսի համարը՝ 5) էլեկտրոնային փոստը՝ 6) զբաղեցրած պաշտոնի անվանումը՝ 7) ինքնակենսագրականը (CV) կցվում է՝
11. Շահագործման համար պատասխանատու անձինք
Օդանավ շահագործողը պետք է ունենա նշանակված և գլխավոր վարչության կողմից հաստատված պատասխանատու անձինք, ովքեր պետք է պատասխանատվություն կրեն իրենց բնագավառներին վերաբերող բոլոր տեսակի շահագործումների կառավարման համար:
12. Թռիչքային գործունեություն
1) անունը, ազգանունը՝ 2) զբաղեցրած պաշտոնի անվանումը՝ 3) N 4 ձևը կցվում է՝
13. Թռիչքային պիտանիության և (կամ) տեխնիկական սպասարկման համակարգ
1) անունը, ազգանունը՝ 2) զբաղեցրած պաշտոնի անվանումը՝ 3) ինքնակենսագրականը (CV) կցվում է՝
14. Ավիացիոն անվտանգություն
1) անունը, ազգանունը՝ 2) զբաղեցրած պաշտոնի անվանումը՝ 3) ինքնակենսագրականը (CV) կցվում է՝
15. Անձնակազմի վերապատրաստում
1) անունը, ազգանունը՝ 2) զբաղեցրած պաշտոնի անվանումը՝ 3) N 4 ձևը կցվում է՝
16. Վերգետնյա սպասարկում
1) անունը, ազգանունը՝ 2) զբաղեցրած պաշտոնի անվանումը՝ 3) ինքնակենսագրականը (CV) կցվում է՝
17. Այլ նշանակված պաշտոնատար անձինք
1) անունը, ազգանունը՝ 2) զբաղեցրած պաշտոնի անվանումը՝ 3) ինքնակենսագրականը (CV) կցվում է՝ 4) անունը, ազգանունը՝

5) զբաղեցրած պաշտոնի անվանումը՝ 6) ինքնակենսագրականը (CV) կցվում է՝ 7) անունը, ազգանունը՝ 8) զբաղեցրած պաշտոնի անվանումը՝ 9) ինքնակենսագրականը (CV) կցվում է՝
18. Որակի կառավարում
Օդանավ շահագործողը պետք է նշանակի գլխավոր վարչության կողմից հաստատված որակի կառավարիչ՝ 1) անունը, ազգանունը՝ 2) զբաղեցրած պաշտոնի անվանումը՝ 3) ինքնակենսագրականը (CV) կցվում է՝
19. Վթարների կանխարգելման և թռիչքային անվտանգության ծրագիր
Օդանավ շահագործողը պետք է նշանակի ծրագրի կառավարման համար պատասխանատու անձի՝ 1) անունը, ազգանունը՝ 2) զբաղեցրած պաշտոնի անվանումը՝ 3) ինքնակենսագրականը (CV) կցվում է՝
20. Միջազգային և (կամ) ներքին օդային երթուղիներում թռիչքների իրականացման ուղեցույցը ներկայացնելը
Միջազգային և (կամ) ներքին օդային երթուղիներում թռիչքների իրականացման ուղեցույցը (այսուհետ՝ ուղեցույց) կարող է գլխավոր վարչություն ներկայացվել շահագործման նախատեսված օրվանից ոչ ուշ, քան վաթսուն օր առաջ: Ուղեցույցը կներկայացվի (նշել ներկայացնելու նախատեսված ամսաթիվը)՝
21. Շահագործումն սկսելու նախատեսված օրը
Շահագործման նախատեսված օրը պետք է լինի ոչ շուտ, քան հայտը և սույն հայտին կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացնելու ամսաթիվը՝

ԲԱԺԻՆ 3: Ավիացիոն գործունեության նկարագրությունը

22. Սույն բաժնում պետք է արտացոլված լինի հայտատուի կողմից նախատեսված ավիացիոն գործունեության, շահագործման համապարփակ նկարագրությունը, մասնավորապես, շահագործման վայրը (վայրերը) (գրանցման երկրի ներսում (Ա-Ա), գրանցման երկրից դեպի այլ երկիր (Ա-Բ), գրանցման երկրից դուրս (Բ-Բ), փոխադրումների տեսակները (ուղևորային և (կամ) բեռնային, փոստ), հատուկ փոխադրումներ (վտանգավոր բեռներ, ռազմական նշանակության արտադրանք, կենդանիներ և այլն), ավիացիոն գործունեության տեսակները և այլն, յուրաքանչյուր օդանավի համար նախատեսված շահագործման տարածաշրջանները և երթուղիները, օդանավի (օդանավերի) տիպերը, գրանցման նիշերը, երկրները և նախատեսված բազավորման վայրերը: Խնդրում ենք սույն բաժնում նշված «Նկարագրությունը» դաշտերը լրացնել հակիրճ և բովանդակալից:

23. Ավիացիոն գործունեություն (ավիացիոն գործունեության տեսակները, շահագործման տիպերը և տեսակները)
Նկարագրությունը՝ 1) շահագործման վայրերը՝ 2) Ա-Ա շահագործումներ՝ 3) Ա-Բ շահագործումներ՝ 4) Բ-Բ շահագործումներ՝ 5) փոխադրումների տեսակները՝ 6) ուղևորային՝ 7) բեռնային՝ 8) փոստային՝ 9) համակցված (ուղևոր, բեռ, փոստ)՝ 10) գործունեության տեսակները՝ 11) առևտրային՝ 12) ոչ առևտրային՝ 13) մասնավոր՝ 14) աերոտաքսի՝ 15) ընդհանուր ավիացիա՝ 16) շահագործման տեսակները՝ 17) կանոնավոր օդային հաղորդակցություն՝ 18) ոչ կանոնավոր օդային հաղորդակցություն
24. Պահանջվող հատուկ թույլտվություններ՝ Նկարագրությունը՝ 1) FTL (ՖՏԼ)՝ 2) ETOPS (ԵՏՕՊՍ)՝ 3) AWOPS (ԱՈՒՕՊՍ)՝ 4) RVSM (ՌՎՍՄ)՝ 5) MNPS (ՄՆՊՍ)՝ 6) RNP-10 (ՌՆՊ-10)՝ 7) B-RNAV (Բ-ՌՆԱՎ) (RNAV-5) (ՌՆԱՎ-5)՝ 8) P-RNAV (Պ-ՌՆԱՎ) (RNAV-1) (ՌՆԱՎ-1)՝ 9) GNSS Approach (ԳՆՍՍ ԱՊՊՐՈԱՉ)՝ 10) Dangerous Goods (վտանգավոր բեռներ)՝ 11) Offshore Exposure (օֆշորային լուսավորում)՝ 12) En-route Exposure (երթուղային լուսավորում)՝ 13) Public Interest Operations (պետական նշանակության շահագործումներ)՝ 14) Ground Level Exposure (վերգետնյա լուսավորում)՝ 15) HEMS (ՀԷՄՍ)՝
25. Այլ նշումներ՝
26. Շահագործման նախատեսված տարածաշրջաններ
Խնդրում ենք տրամադրել յուրաքանչյուր օդանավի շահագործման և (կամ) երթուղիների տարածաշրջանների հակիրճ նկարագրությունը՝ 1) օդանավի տիպը՝ Նախատեսված շահագործման տարածաշրջանը և (կամ) երթուղին՝

2) օդանավի տիպը՝ Նախատեսված շահագործման տարածաշրջանը և (կամ) երթուղին՝ 3) օդանավի տիպը՝ Նախատեսված շահագործման տարածաշրջանը և (կամ) երթուղին՝
27. Օդանավերի և շահագործման բազավորման մասին տեղեկատվություն
Սույն կետում պետք է արտացոլված լինի համապարփակ տեղեկատվություն յուրաքանչյուր օդանավի և նրա բազավորման մասին:
28. Օդանավերի մասին տեղեկատվություն

1) օդանավ արտադրող ընկերությունը	2) տիպը/մոդելը	3) գրանցման նիշը	4) տեսչական ստուգման համար պատրաստ է (ամսաթիվը)	5) թռիչքային պիտանիության վկայական պահանջվում է (այո, ոչ)

29. Շահագործման բազա
Նախատեսված շահագործման բազա
30. Օդանավերի տեխնիկական սպասարկում
Սույն կետում պետք է արտացոլված լինի համապարփակ տեղեկատվություն այն մասին, թե որ արտոնագրված կազմակերպության կողմից է իրականացվելու օդանավերի տեխնիկական սպասարկումը:

1) արտոնագրված տեխնիկական սպասարկում իրականացնող ընկերության անվանումը	2) բազային կամ գծային տեխնիկական սպասարկում (բազային և (կամ) գծային)	3) արտոնագրման համարը

ԲԱԺԻՆ 4: Ստորագրում

31. Ստորագրում և կնքում
Սույնով հավաստում եմ, որ ներկայացված տեղեկատվությունները ճիշտ են, և, որ գլխավոր վարչությունը կտեղեկացվի ներկայացված տեղեկությունների յուրաքանչյուր փոփոխության դեպքում, գործող օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Խնդրում եմ՝ 1) տրամադրել օդանավ շահագործողի վկայական՝ 2) երկարաձգել օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետը՝ համաձայն ներկայացված տեղեկատվության: Ստորագրությունը՝ Անունը, ազգանունը՝ Պաշտոնը՝ Ամսաթիվը՝

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA
GENERAL DEPARTMENT OF CIVIL AVIATION

ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ՎԿԱՅԱԿԱՆ
AIR OPERATOR CERTIFICATE

AM AOC _ _ _ _

This Certificate certifies that _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ is authorized to perform Commercial Air Operations, as defined in the attached operations specifications, in accordance with the OM, Annex **IV** (Part - CAT) to ARM - AIR OPS and its Implementing Rules.

Շահագործման տեսակներ
Types of operation

Կոմերցիոն օդային տրանսպորտ ☐
Commercial air transport (CAT)

Բեռներ ☐
Cargo

Ուղևորներ ☐
Passengers
Այլ ☐
Other

Տալու ամսաթիվը ՝ DD ’ MM YY
Date of issue ՝ DD ’ MM YY
Գործողության ժամկետը լրանալու ամսաթիվը ՝ DD ’ MM YY
Expiry date ՝ D D ’ MM YY

Գլխավոր վարչության պետ . **Ա. Մովսեսյան**
Director General **A. Movsesyan**

Կ.Տ.

Seal

voroshumMK-137

Սույնով հավաստիացվում է, որ ավիաընկերությունը
This certifies that . . . . . **Airline**
(name)

Հասցեն՝
Հեռ.՝
Ֆաքս՝
E-mail՝
համապատասխանում է «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին և նրա մեջ նշված՝ սույն վկայականը տալու հետ կապված համապատասխան շահագործողական նորմատիվային կանոններին, և նրան թույլատրվում է կատարել նրա մեջ նշված շահագործողական նորմատիվներին և կանոններին, ինչպես նաև կից շահագործողական պահանջներում պարունակվող վերապահումներին, պահանջներին և սահմանափակումներին համապատասխան օդային փոխադրումներ՝ համաձայն Ավիափոխադրողի մասնագրի, Թռիչքների իրականացման ուղեցույցի:
Սույն վկայականը փոխանցման ենթակա չէ և ուժի մեջ է մնում մինչև դրա հանձնումը, գործողության կասեցումը կամ այլ կերպ գործողության դադարեցումը:

Address:
Tel:
Fax:
E-mail:
has met the requirements of "Aviation Law" of the Republic of Armenia and related operating regulations and rules prescribed thereunder for the issuance of this certificate and is hereby authorized to conduct air transportation operations in accordance with said operating regulations and rules prescribed thereunder and the terms, conditions and limitations contained in the attached operations specifications, in accordance with the Air Carrier Certificate, Operations manual.
This certificate is not transferable and shall continue in effect until surrendered, suspended or otherwise terminated.

(1) Telephone and Fax details, including the country code. E-mail detail.

(2) Insertion of associated Air Operator Certificate (AOC) number.
(3) Insertion of the Operator's registered name and the Operator's trading name *(if different, insert " Doing business as " before the trading name)*
(4) Issue date of the Operator's specifications (dd-mm-yyyy) and signature of the GDCA representative.
(5) Insertion of the ICAO designation of the aircraft make, model and series, or master series,
if a series has been designated (e. g. Airbus - 320 - 214)
(6) Enter the registration marks are listed in the operations specifications or the OM. In the later case
the related operations specifications must make a reference to the related page in the OM. In case not in all
specific approvals apply to the aircraft model, the registration marks of the aircraft could be entered in the
remark column to the related specific approval.
(7) Listing the geographical area(s) of authorized operation *(by geographical coordinates or specific routes,*
FIR or national or regional boundaries).
(8) listing of the applicable special limitations *(e. g. VFR only, Day only, etc. ..).*
(9) list in this column the most permissive criteria for each approval or the approval type *(with appropriate*
criteria).
(10) Insertion of applicable precision approach category : LTS CAT I, CAT II, OTS CAT II, CAT III A,
CAT III B or CAT III C. Insertion of minimum Runway Visual Range *(RVR)* in meters and
Decision Height*(DH)* in feet.
(11) Insertion of approved minimum take - off RVR in meters. One line per approval may be used if different approvals are granted.

(12) Not Applicable (N / A) box may be checked only if the aircraft maximum celling is bellow FL 290.
(13) Extended range operations (ETOPS) currently applies only to two-engined aircraft. Therefore the Not
Applicable (N / A) box may be checked only if the aircraft model has more or less than two engines.
(14) The threshold distance may also be listed (in NM), as well as the engine type.
(15) Performance-based Navigation (PBN) : one line is used for each PBN approval *(e. g. Area Navigation RNAV 10, RNAV 1, required Navigation Performance - RNP 4 ...)* with appropriate limitations or conditions listed in the " Specification's and / or Remark's columns.
(16) Limitations, condition's and regulatory basis for operational approval associated with the PBN approval *(e. g. Global Navigation Satellite System - GNSS, Distance Measuring Equipment / Inertial Reference Unit - DME / DME / IRU).*
(17) Approval to conduct the Training course and Examination to be completed by applicants for a Cabin Crew Attestation as specified in Annex V (Part - CC) to ARM - AIR CREW.
(18) Approval to issue Cabin Crew Attestation as specified in Annex V (Part - CC) to ARM - AIR CREW. (19) The name of the person / organization responsible for ensuring that the continuing airworthiness of the
aircraft is maintained and a reference to the regulation that requires the work, i. e. Annex I (Part - M),
Subpart G.
(20) Other approvals or data can be entered here, using one line *(or one multi-line block)* per authorization *(e. g. short landing operations, steep approach operations, helicopter operations to / from a public interest site, helicopter operations over a hostile environment located outside a congested area, helicopter operations without a safe forced landing capability, operations with increased bank angles, maximum distance from an adeqiate aerodrome for two-enginedaeroplanes without an ETOPS approval, aircraft used for non-commercial operations).*

Ձև N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA
GENERAL DEPARTMENT OF CIVIL AVIATION

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

(Թռիչքների իրականացման ձեռնարկի հաստատված պայմանների պահպանմամբ)

OPERATIONS SPECIFICATIONS

(Subject to the approved conditions in the Operations Manual)

Հեռախոս. + 374 (10) 28 20 66 Ֆաքս + 374 (10) 28 53 45 E-mail: gdca@aviation.am
Telephone + 374 (10) 28 34 29 Fax + 374 (10) 28 34 29 fsid@aviation.am

AOC# **AM-AOC-**	Շահագործողի անվանումը Name of Operator, Առևտրական անվանումը Commercial name	Date Ստորագրություն/подпись/Signature: Թռիչքային պիտանիության վարչության պետ Director of Airworthiness Department	Կ.S./Seal

Նավատորմ **Fleet:** №				
Օդանավի տեսակը՝ Aircraft Model				
Ազգային և գրանցման նիշերը՝ Nationality and registration marks:				
Շահագործման տեսակը՝ Types of operation:	Առևտրային օդային փոխադրումներ Commercial air transport	☐ Ուղևորներ Passengers	☐ Բեռներ Cargo	☐ Այլ Other
Թռիչքների շրջանը (շրջանները)՝ Area(s) of operation:				
Հատուկ սահմանափակումներ՝ - Special Limitation: -				

Հատուկ թույլտվություններ՝ Special Authorizations	Այո Yes	Ոչ No	Հատուկ հաստատումներ Special Approvals	Նշումներ Remarks
Վտանգավոր բեռներ՝ Dangerous goods:	☐	☐		
Շահագործում վատ տեսանելիության պայմաններում՝ Low visibility operations Անցում վայրէջքի և վայրէջք Approach and Landing Վերթիռ Take-off	☐ ☐	☐ ☐		
RVSM ☐ Չի կիրառվում Not Applicable	☐	☐		
PBN պայմաններում թռիչքների նավիգացիոն հատուկ դրույթներ Navigation specifications for PBN operations	☐	☐		

26 / 2 Շահագործման հատուկ դրույթներ / Operations Specifications **AM-AOC-**

Չի կիրառվում ETOPS ☐ Not Applicable	☐	☐	Maximum diversion time: -	
Թռիչքային պիտանիության պահպանում Continuing airworthiness		☐		
Այլ Other	☐	☐		

Նշանակված պատասխանատու անձինք Nominated Postholders	
Պատասխանատու ղեկավար Accountable Manager	
Որակի ղեկավար Quality Manager	
Թռիչքների անվտանգության և պատահարների կանխման ծրագրի ղեկավար Accident Prevention & Flight Safety Programme Manager	
Թռիչքների շահագործման ղեկավար Flight Operations	
Տեխնիկական սպասարկման ղեկավար Maintenance Manager	
Անձնակազմի ուսուցման ղեկավար Crew Training Manager	
Վերգետնյա շահագործման ղեկավար Ground Operations Manager	

(1) Telephone and Fax details, including the country code, E-mail detail.
(2) Insertion of associated Air Operator Certificate (AOC) number.
(3) Insertion of the Operator's registered name and the Operator's trading name *(if different, insert " Doing business as " before the trading name)*
(4) Issue date of the Operator's specifications (dd-mm-yyyy) and signature of the GDCA representative.
(5) Insertion of the ICAO designation of the aircraft make, model and series, or master series, *if a series has been designated (e. g. Airbus - 320 - 214)*.
(6) Enter the registration marks are listed in the operations specifications or the OM. In the later case the related operations specifications must make a reference to the related page in the OM. In case not in all specific approvals apply to the aircraft model, the registration marks of the aircraft could be entered in the remark column to the related specific approval.
(7) Listing the geographical area(s) of authorized operation *(by geographical coordinates or specific routes, FIR or national or regional boundaries)*.
(8) listing of the applicable special limitations *(e. g. VFR only, Day only, etc. ..)*.
(9) list in this column the most permissive criteria for each approval or the approval type *(with appropriate criteria)*.
(10) Insertion of applicable precision approach category : LTS CAT I, CAT II, OTS CAT II, CAT III A, CAT III B or CAT III C. Insertion of minimum Runway Visual Range *(RVR)* in meters and Decision Height *(DH)* in feet.
(11) Insertion of approved minimum take - off RVR in meters. One line per approval may be used if different approvals are granted.
(12) Not Applicable (N / A) box may be checked only if the aircraft maximum celling is bellow FL 290.
(13) Extended range operations (ETOPS) currently applies only to two-engined aircraft. Therefore the Not Applicable (N / A) box may be checked only if the aircraft model has more or less than two engines.
(14) The threshold distance may also be listed (in NM), as well as the engine type.
(15) Performance-based Navigation (PBN) : one line is used for each PBN approval *(e. g. Area Navigation RNAV 10, RNAV 1, required Navigation Performance - RNP 4 ...)* with appropriate limitations or conditions listed in the " Specification's and / or Remark's columns.
(16) Limitations, condition's and regulatory basis for operational approval associated with the PBN approval *(e. g. Global Navigation Satellite System - GNSS, Distance Measuring Equipment / Inertial Reference Unit - DME / DME / IRU)*.
(17) Approval to conduct the Training course and Examination to be completed by applicants for a Cabin Crew Attestation as specified in Annex V (Part - CC) to ARM - AIR CREW. (18) Approval to issue Cabin Crew Attestation as specified in Annex V (Part - CC) to ARM - AIR CREW.
(19) The name of the person / organization responsible for ensuring that the continuing airworthiness of the aircraft is maintained and a reference to the regulation that requires the work, i. e. Annex I (Part - M), Subpart G.
(20) Other approvals or data can be entered here, using one line *(or one multi-line block)* per authorization
(e. g. short landing operations, steep approach operations, helicopter operations to / from a public interest site, helicopter operations over a hostile environment located outside a congested area, helicopter operations without a safe forced landing capability, operations with increased bank angles, maximum distance from an adeqiate aerodrome for two-engined aeroplanes without an ETOPS approval, aircraft used for non-commercial operations).

According EASA Form 139 **Issue** 1

Թռիչքային պիտանիության վարչության պետ

Director of Airworthiness Department

(ստորագրությունը, ազգանունը, անունը)
(signature, name)

Կ.Տ./Seal

Ամսաթիվը՝
Date:

voroshumMK-137

Ձև N 4

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն *General Department of Civil Aviation at the Government of the Republic of Armenia*		ՓԱՐՏ-Մ-ի ԵՆԹԱՄԱՍԻ «Ձ» ՎԱՎԵՐԱՑՈՒՄ *Part-M Subpart G APPROVAL*	ՀԱՅՏ՝ Application for սկզբնական շնորհման [ ] *initial grant* փոփոխման [ ] *change*
1.	Հայտատուի գրանցված անվանումը՝ *Registered name of applicant:*		
2.	Առևտրային անվանումը (առկայության դեպքում)՝ *Trading name (if different):*		
3.	Վավերացման ենթակա հասցեները՝ *Addresses requiring approval:*		
4.	Հեռ. *Tel.*	Ֆաքս. *Fax.*	Էլ. փոստ. *E-mail.*
5.	Ենթամաս-Ձ-ի վավերացման տիրույթը՝ համաձայն սույն հայտի՝ *Scope of Subpart-G Approval relevant to this application.*		
6.	Հաշվետու կառավարչի (ներկայացված*) պաշտոնը և անունը, ազգանունը՝ *Position and name of the (proposed *) Accountable Manager.*		
7.	Հաշվետու կառավարչի ստորագրությունը (ներկայացված*)՝ *Signature of the (proposed *) Accountable Manager.*		
8.	Հասցեն՝ *Place.*		
9.	Ամսաթիվը՝ *Date.*		

	Ծանոթագրություն 1. Ձևը (ձևերը) ներկայացվում է (են) *Note 1: The Form(s) should be sent to*	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն *General Department of Civil Aviation at the Government of the Republic of Armenia*
	Ծանոթագրություն 2. Տեղեկատվություն վճարումների մասին *Note 2: Information on any fees payable*	
* Կիրառելի է միայն ՓԱՐՏ-ի նոր հայտատուի համար *Applicable only in the case of new PART Applicant*		